ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՏՆՕՐԵՆ
2023 թ.

ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ ԵՄ
ՄԿԱ՝
01 09 2023 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ Գ.ՓԱՐԱՔԱՐ

«ՓԱՐԱՔԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»ՊՈԱԿ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ԴԱՍԱՐԱՆ

2Ա-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՄՆԽՉՅԱՆ ԻԴԱ ԿԱՄՈՅԻ

« 2023- 2024 » ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

ԿՐԹԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

Երկրորդ Ա դասարանում սովորում են 22 աշակերտ, որից 10 աղջիկ, 12 տղա: Աշակերտները կամաց-կամաց հարմարվում են դպրոցական կյանքին, փորձում են մտերմանալ և ընկերանալ միմյանց հետ:

2.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Սովորողների նկատմամբ ցուցաբերել հանդուրժող մոտեցում, որպեսզի հնարավորին շուտ հարմարվեն դպրոցական կյանքին:

Ապահովել դասագրքերով: Կազմակերպել ուսումնադաստիարակչական գործընթացը: Հետևել աշակերտների հաճախելիությանը: Առաջադիմության բարձրացման ուղղությամբ՝ աշխատել առարկայական ուսուցիչների հետ, պարբերաբար ստուգել, վերլուծել ընթացիկ և վերջնական գնահատականները:Սովորողների և մանկավարժների միջև ձևավորել բարյացկամ, ներդաշնակ փոխհարաբերություններ: Հետևել դասարանի կարգ ու կանոնին, սանիտարահիգենիկ վիճակին: Յուրաքանչյուր աշակերտի նկատմամամբ ցուցաբերել անհատական մոտեցում, որպեսզսի զերծ մնան հնարավոր սխալներից: Ձևավորել պատասխանատվության, փոխօգնության, համագործակցության ոգի,սովորողների մեջ ստեղծել արդյունավետ հարաբերությունների համակարգ: Խթանել կոլեկտիվ ստեղծագործական գործունեության ձևավորմանը, ինչպես կրթական գործունեության մեջ, այնպես էլ դրանից դուրս: Աշակերտների մոտ ձևավորել արժեքային համակարգ:

Կազմակերպել դասարանական ժողովներ, կազմակերպել կոլեկտիվ ստեղծագործական աշխատանքներ, կազմակերպել այցելություններ թատրոններ, թանգարաններ...կազմակերպել հանրօգուտ աշխատանքներ:

Հաճախակի կազմակերպել ծնողական ժողովներ, ծանոթանալ երեխաների սոցիալական պայմաններին:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոգևոր դաստիարակություն

Դասղեկի ժամերին անցկացնել զրույց զեկուցումներ քրիստոնեական պատմություններից :

Խորացնել գիտելիքները կրոնական ծեսերի մասին: Զրույց կրոնական ծեսերի և աղանդների մասին:Այցելել եկեղեցիներ: Դասղեկի ժամերին կարդալ ,,Երկնքից տասը խնձոր ընկավ, տասը պատվիրան,, գիրքը:

Գեղագիտական դաստիարակություն

Աշակերտների մեջ ձևավորել գեղագիտական ճաշակ:Այցելել պատկերասրահներ և մշակութային օջախներ: Կազմակերպել էքսկուրսիաներ: Դասարանը կահավորել ճաշակով և նպատակային:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Աշակերտների մեջ սերմանել հայրենասիրություն, , քաջություն, կամքի ուժ: Ծանոթացնել հայ ժողովրդի անցած ուղուն՝ նրա փառավոր էջերին և հերոսներին: Սեր արթնացնել հայրենիքի նկատմամբ:

Ֆիզիկական դաստիարակություն

Ձևավորել առողջ ապրելակերպի վարքագիծ: Կեցվածքի ձևավորման համար ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել աշակերտի ճիշտ նստելաձևը և կեցվածքը: Անընդհատ անցկացնել ընդհանուր զարգացնող վարժություններ, ֆիզկուլտդադարներ:

Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների մեջ դաստիարակել աշխատասիրություն, ընդգրկել սանիտարահիգենիկ աշխատանքներին, պատրաստել հավաքածուներ: Հետևել դասասենյակի մաքրությանը: Սահմանել հերթապահություն

Բնապահպանական դաստիարակություն

Աշակերտներին իրազեկել էկոլոգիայի, բնապահպանության անհրաժեշտությունը: Դրա պահպանության համար ուրաքանչյուրի մասնակցության կարևորությունը:

5. «ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ» ԺԱՄԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ,ՇԱԲԱԹՎԱ ՕՐԸ, ԺԱՄԸ

	Անցկացման օրը, ամիսը, տարեթիվը	Անցկացվող միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	Ծանոթություն
1.	**01-09-2023թ.**	Գիտելիքի օր	
2.	**08-09-2023թ.**	Ծանոթություն «Ովքե՞ր են իմ դպրոցական ընկերները»	
3.	**15-09-2023թ.**	ՀՀ-ն անկախություն նվիրված զրույց, տեսանյութի դիտում	
4.	**22-09-2023թ.**	Ճ/երթ. Ով է հետիոտնը	
5.	**29-09-2023թ.**	Համագործակցություն «Պատառիկներ», «Գիրք ենք ստեղծում»	
6.	**06-10-2023թ.**	Ճ/երթ. Մեր փողոցներում	
7.	**13-10-2023թ.**	«Մեր ազգային հերոսները»	
8.	**03-11-2023թ.**	Արդյունավետ հաղորդակցում «Հեռախոս», «հեռագիր», «Մարդ-գրատախտակ»	
9.	**10-11-2023թ.**	Ճ/երթ. Մենք գնում ենք դպրոց	
10.	**17-11-2023թ.**	Խնդիրների համատեղ լուծում «Կարող են թեման շրջանցել»	
11.	**24-11-2023թ.**	Կոնֆլիկտների հաղթահարում «Արի հաշտվենք», «Չեմ ուզում կռվել»	
12.	**01-12-2023թ.**	Ճ/երթ. Սա պետք է իմանան բոլորը	
13.	**08 -12-2023թ.**	Բանակցություններ « Կախարդական ծրարը»	

14.	**15-12-2023թ.**	Ճ/երթ. Մեր հավատարիմ բարեկամը՝ լուսացույց	
15.	**22-12-2023թ.**	Միջոցառում Նոր տարի	
16.	**15-01-2024թ.**	Ճ/երթ. Մենք ծանոթանում ենք ճանապարհային նշաններին	
17.	**26-01-2024թ.**	ՀՀ հզոր բանակ «Ես զինվորն եմ հայրենիքիս» : Մեր խորհրդանիշները՝ դրոշ, զինանշան, գերբ	
18.	**02-02-2024թ.**	Առողջության օր՝« Մեզ հյուր են եկել բժիշկները»	
19.	**09-02-2024թ.**	Երեխայի իրավունքները «Հաճելի է, հաճելի չէ», «Ես իրավունք ունեմ»	
20.	**16-02-2024թ.**	Ճ/երթ. Որտեղ կարելի խաղալ	
21.	**23-02-2024թ.**	Սուրբ Զատկի խորհուրդը: Եկեղեցու դերը ազգապահպանման գործում	
22.	**01-03-2024թ.**	Քաղպաշպանության օր	
23.	**08-03-2024թ.**	Ցերեկույթ « Գարունը նման է մայրիկիս	
24.	**15-03-2024թ.**	Ճ/երթ Մենք ուղևորներ ենք	
25.	**05-04-2024թ.**	Պահպանենք վարվեցողության կանոնները	
26.	**12-04-2024թ.**	Ճ/երթ. Քաղաքամերձ ճանապարհին	
27.	**19-04-2024թ.**	1915… զրույց, փաստավավերագրական ֆիլմի դիտում	
28.	**26-04-2024թ.**	Շրջակա միջավայր « Աղբն ո՞վ թափեց»	
29.	**03-05-2024թ.**	Մայիսյան հաղթանակներ:	
30.	**10-05-2024թ.**	Ճ/երթ. Սովորում ենք պահպանել երթևեկության կանոնները	
31.	**17-05-2024թ.**	Զրույց Հայի և Հայաստանի մասին	
32.	**24-05-2024թ.**	Ողջույն ամառ	